1905

№ 235 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 № 235

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կօպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայերի ներկայ դրութիւնը. Դարձեալ ընդգծում ենք. Վերջին տեղեկութիւններ. Վերջին դէպքերը Թիֆլիսում. Դրութիւնը Շուլաւէրում. Դաշնակցականների Թռուցիկը. Մամուլ. Ընթերցողի օրագիրը. Գանձակի աղէտը. Սպանվածներ և վիրաւորվածներ. Սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան ռեզօլիւցիան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դէպքերը Թիւրքիայում. Արտաքին լուրեր.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՅԵՐԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է կատարվում ներկայումս մեր երկրի հայաբնակ տեղերում—ահա հարցը, որ տալիս են բոլորը միմեանց։

Տանք մի քանի ամփոփ տեղեկութիւններ։

Թիֆլիսում դեռ շարունակվում է հայ-թուրքական յարաբերութիւնների «պատերազմական դրութիւնը»։ Թուրքերը կանգնած են մեծ խմբերով Նաւթլուղի մօտերքը և այդ կողմից պաշարել են քաղաքի մուտքը։ Հայ դաշնակցական զինւորները բռնել են դիրքեր թէ բուսաբանական այգու, թէ քաղաքի այն բոլոր մասերում, որտեղ կարող են թուրքերը ընդհարվել հայերի հետ։ Դաշնակցականների և թուրքերի դիրքերի մէջ կանգնած են սօցիալ-դեմօկրատները, կազմելով չէզոք տարր թուրքերի և հայերի մէջ։ Կիրակի, նոյեմբերի 27-ին և երէկ նոյեմբերի 28-ին թուրքերի և սօցիալ-դեմօկրատների ու հայերի մէջ տեղի ունեցան արիւնահեղ ընդհարումներ, որոնց մասին մեր ընթերցողները գաղափար կը կազմեն ներքև զետեղած հաղորդագրութիւնից։

Միւս կողմից Թիֆլիսում ներկայումս բանակցութիւններ են անվում թուրքերի և հայերի ներկայացուցիչների մէջ, վերջ դնելու ընդհարումներին և հաշտութիւն կայացնելու։ Վերջնական պայմաններ դեռ չեն մշակված։

Թիֆլիսի գաւառում հայերը շատ տեղ ենթարկվել են թուրքերի արշաւանքների։ Կարաեազում գտնվող հայ գիւղացիների և կալուածատէրերի բոլոր գոյքը ու պաշարները զոհ են դարձել Նազարլի և Քեօսալի թուրք գիւղերի բնակիչների յարձակման։

Թիֆլիսից դէպի Շուլաւէր տանող ճանապարհի երկու կողմում գտնվող հայ գիւղերը ենթարկվել են ասպատակութեան։ Հայ-Սօղանլուխ գիւղում աւերվել են մի քանի տներ և վիրաւորվել մի քանի մարդիկ։ Թելեթ, Կումիս, Կօդա, Վաշլօվան և մերձակայ գիւղեր, որոնց մէջ խառն ապրում են հայ և վրացի գիւղացիներ, զրկվել են իրանց տաւարի մի նշանաւոր մասից։

Բօրչալուի գաւառում, Երեւանեան երկաթուղու գծի վրա գտնվող կայարանների շուրջն ապրող թուրք ազգաբնակութիւնը յարձակվել է հայ խանութպանների և կալուածքների վրա, վիրաւորել շատերին և աւերել շինութիւնները։ Աշաղա-Սարալ կայարանում թուրքերը յարձակվել են խանութպան Եփրեմի վրա, նրան վիրաւորել՝ իսկ խանութը կողոպտել են։ Արտեմ Տուրինեանի կալուածքում նրանք հրդեհել են շինութիւնները և տարել պաշարները։ Ինքը Տուրինեանը իր ընտանիքով հազիւ ազատվել է մահից։

Գանձակում առ այժմ խաղաղութիւն է տիրում, բայց հակառակ կողմերի տրամադրութիւնը շատ լարված է և ծանր։ Գլխաւոր կոտորածից յետոյ տեղի ունեցաւ դարձեալ մի դէպք, որ կարող էր նորից փոխարկվել մեծ ընդհարումի, բայց նա սահմանափակվել է միայն հինգ զոհերով, որոնցից 3-ը հայեր, իսկ 2-ը թուրքերի կողմից։

Գանձակի նահանգի զանազան կողմերից ստացվում են կասկածելի լուրեր։ Սկսած Եվլախից մինչև Թիֆլիս, բոլոր կայարանների մօտ եղած հայ ազգաբնակութիւնը ենթարկվել է յարձակման շրջակայ թուրքերի կողմից։ Դալլարի և Անենֆելդի մօտ եղած հայերի դժբաղդ և ողբերգական վիճակի մասին մեր ընթերցողները կը տեղեկանան առանձին հաղորդագրութիւնից, որ զետեղում ենք ներկայ համարում։

ԴԱՐՁԵԱԼ ԸՆԴԳԾՈՒՄ ԵՆՔ

Ռուսների և վրացիների շրջաններում մենք այս օրերս շատ առիթներ ունեցանք լսելու կարծիքներ հայ-թուրքական ընդհարումների մասին։ Ժամանակը չէ զբաղվելու այդ կարծիքների բնորոշմամբ և լուսաբանութեամբ։ Մենք կանգ կառնենք մի կէտի վրա։

Այդ կէտը—խաղաղասիրութիւնն է։

Ռուսները և վրացիները ասում են, որ թէ հայերը և թուրքերը պէտք է խաղաղասիրական տրամադրութիւն մտցնեն ու մշակեն և այդպիսով վերջ դնեն հայ-թուրքական ընդհարումներին։

Մենք յայտնում էինք, որ հայերը միշտ խաղաղասէր են եղել և այս վերջին ինն ամսեայ ընթացքում, երբ հայերը մինչև սրտի խորքը վշտացած և վիրաւորված էին, դարձեալ խաղաղութեան մասին էին տենչում։ Մենք նկատում էինք, որ մեր խօսակիցները նախապաշարված են և այն համոզմանն են, թէ հայերը բոլոր ժամանակը ունեցել են յարձակողական, ագրեսիվ ուղղութիւն իրանց յարաբերութիւնների մէջ թուրքերի հետ։

Իւրաքանչիւր հայ, կարդալով այս տողերը, կը զարմանայ. բայց մեր ասածը իրողութիւն է և մարդիկ այնպէս են հասկացրել, որ հայերն են յարձակում կազմողները, հայերն են առիթ ստեղծողները այն ամբոխային մեծ շարժման համար, որ մեր երկրի բոլոր թուրքերին ոտքի է կանգնեցրել և զինել մեր դէմ,

Մենք, որ ինքներս գիտենք, թէ որքան թանգ է մեզ համար խաղաղութիւնը, որ համոզված ենք թէ ինչ աստիճան վնասվում է մեր հասարակական և անհատական առաջադիմութիւնը ընդհարումների պատճառով, միայն խորին վշտով կարող ենք արձանագրել, որ մեր դէմ լարված դաւը կարողացել է շատ մտքեր պղտորել և շատ թիւր հասկացողութիւններ տարածել օտարների մէջ մեր մասին։

Համոզել հայերին, որ նրանք խաղաղասէր լինեն—դա ծաղր է մեր իրականութեան վրա, որը ամիսներ և տարիներ շարունակ միայն զբաղված է եղել արձանագրելով թէ ինչպէս խաղաղասէր հայի վրա յարձակվել է աւազակը, ասպատակողը, թալանողը։

Մենք հազար կրկնել ենք և կը կրկնենք, որ մենք ամենևին նպատակ չունենք թշնամական յարաբերութիւններ ունենալ մեր հարևանների հետ և որ մեր երկրի առաջադիմութիւնը կարող է ապահովված լինել, երբ նրա մէջ ապրող բոլոր ազգերը համերաշխ և աջակից կը լինեն միմեանց։

Մի անգամ էլ կրկնենք, մի անգամ էլ շեշտենք։

Թող գայ այդ խաղաղութիւնը։ Միայն թէ դա լինի անկեղծ ցանկութիւն և մեր հարևանների կողմից, որոնք եթէ գիտենային թէ որքան մեծ բարիք է պարունակում իր մէջ խաղաղութիւնը, աւելի վաղ և աւելի եռանդուն կերպով ձեռք զարկած կը լինէին խաղաղ կուլտուրական գործունէութեան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք ստացանք Շուլավէրից նոյեմբերի 27-ին առաւօտեան ժամը 10-ին հետևեալ հեռագիրը.

«Երկու հազար զինւորված Բօրչալուեցի թուրքեր շրջապատել են մեզ, սպառնում են վերջնական կոտորածով. վարչութիւնը չունի զօրք. Թուրքերը գայրացած են Թիֆլիսում կատարվող կոտորածի պատճառով։ Ի սէր Աստծու, յետ պահէք հայերին, ձեր թանկագին եղբայրակիցների համար։ Ստուգեցէք այն լուրը, թէ իբր Թիֆլիսի մօտ սպանված են 14 թուրքեր. ազդեցէք Թելեթցիների վրա, որ չը յարձակվեն Արուխլինցիների և Ղզըլ-Աջինցիների վրա։ Շուլավերցիների յանձնարարութեամբ, Բօրչալուի գաւառապետ կապիտան Ռէզանով»։

Մենք չենք հասկանում այս հեռագրի միտքը։

—

Կարաեազից եկած Գրիգոր Տէր-Խաչատրեանց պատմում է հետևեալը։

Նոյեմբերի 24-ին Նազարլու և Քօսալի գիւղերի թուրքերը յարձակվելով հայ Բաղադ աղա Մուրադօվի ոչխարների հօտի վրա, տարել են մօտ 4000 գլուխ ոչխար։ Թուրքերը Կարաթափայի մօտ ոչխարները բաժանել են իրար մէջ և տարել իւրաքանչիւրը իր բաժինը իր մօտ։ Մի և նոյն ժամանակ Աղթաքլա գիւղի թուրքերը յարձակվել են Սմբատ Ջանփօլադեանի այգու վրա և տարել են այնտեղ եղած բոլոր տաւարը, մօտ 30 գլուխ։ Նոյն թուրքերը յարձակվել են Մղիվանօվի Ջրաղցի վրա և տարել են ալիւրը ու տաւարը։

Նոյեմբերի 25-ին թուրք հեծեալները և հետևակները, հաւաքվելով Կարաթափա գիւղը սկսել են խուժել դէպի հայի տները և խանութները։ Հայերը այդտեղ ունէին 17 տուն և երկու խանութ և բնակվում էին 15 — 30 տարուց ի վեր. հողագործութեամբ էին պարապվում, կապալով վերցնելով տեղական կալուածատէրերից և պետութիւնից, վճարելով մօտ 6 րուբլի ցորենի դեսեատինին, 8 ր. բամբակի, 16—25 ր. չալթուկի դեսեատինի համար։

Թուրքերը սրբել տարել են հայերի բոլոր գոյքը և ստացուածքը։ Իրանք հայերը հազիւ կարողացել են ազատվել, պատսպարվելով կայարանում։

Ազատվել են հայերի տներից միայն մէկը։

—

Ականատեսները պատմեցին, որ առհեստաւորաց դպրոցի մօտ անցնում է եղել մի թուրք բռնած երկու ձեռքին մի մի ատրճանակ։ Հայերի և թուրքի մէջ սկսվում է կռիւ, թուրքը վիրաւորվում է։

—

Ականատեսները մեզ պատմեցին հետևեալը։ Միքէլեան փողոցով մի ֆայտօնով անցնում էին մի թուրք երկու խուլիգանների հետ միասին։ Երբ հայերը կանգնեցնում են ֆայտօնը, խուլիգանները փախչում են, իսկ թուրքը սկսում է կրակել ատրճանակից։ Հայերը պատասխանում են կրակով և վիրաւորում թուրքին։

—

Դալլար կայարանից եկած մի հայ հաղորդում է մեզ հետևեալը.

Նոյեմբերի 18-ին ես գտնվում էի երկաթուղու Դալլար կայարանումը և սպասում էի մարդատար գնացքին Գանձակից։ Երեկոյեան ժամի 7-ին գնացքը եկաւ։ Գնացքից իջան Դալլարի թուրք բէգերից մի քանիսը և մի քանի գանձակեցի թուրքեր։ Նրանք պատմեցին, որ Գանձակում տեղի ունեցաւ հայ-թուրքական ընդհարում։ Թուրք ամբոխը սկսեց գրգռվել։ Մենք Դալլար կայարանում գտնվող խանութպաններս հաւաքվեցինք, խանութները փակեցինք և փախանք դէպի գերմանական Անենֆելդ գիւղը, որ գտնվում է երեք վերստ Դալլար կայարանից։ Անենֆելդում գտնվող բոլոր խանութպանները հայեր են։ Կոտորածի լուրը սարսափի մէջ գցեց բոլորին։ Գիշերվայ ժամի 11-ին յանկարծ լսեցի մի ձայն։ Դուրս եկայ, տեսայ ձիերի խրխնջոցը, սայլերի ճռռոց։ Պարզ էր գիշերը։ Ամեն ինչ նկատվում էր փողոցում։ Մի քառորդ ժամ չանցաւ՝ թուրք ամբոխը լցվեց գիւղի փողոցները։ Կացնով, բահերով ջարդեցին բոլոր խանութները։ Ամեն ինչ որ գտնվում էր խանութներում, կողոպտեցին, թալանեցին սայլերի վրա բարձեցին և տարան։ Թուրքերի բղաւոցի, կացնի, հրացանի ձայները ականջներ էին խլացնում։ Ամեն մարդ իր ընտանիքը վերցրել տարել և պատսպարվել էր գերմանացիների անասունների գոմերում. Թուրքերը իրար ձեռքից խլում էին հայի քրտինքով աշխատած ապրանքները։

Դուրս ենք գալիս փողոց. գերմանացիներ կողոպտող թուրքերը ասում են նրանց թէ «դուք դուրս մի գաք փողոցը, սխալմամբ ձեզ վնաս չը հասցնվի»։ Թուրք պրիստաւ Իսմայիլ բէգը իրան կօմանդով ներկայ էր։ Լուսացաւ. սարսափահար ժողովուրդը դուրս եկաւ թաքնված տեղերից, կիսամեռ, արնաքամ. չէինք կարողանում իրար հետ խօսալ. պապանձվել էինք։ Առաւօտեան ժամի 9-ին պրիստաւ Իսմայիլ-բէկ Հաջիբէգօվ իր կօմանդով և 20 կօզակով եկաւ գիւղը, տեղական ստարշինի հետ ման եկաւ կողոպտված, թալանված խանութները։ Կասես թէ ինքը նոր էր գալիս ուրիշ տեղից և ոչինչ տեղեկութիւն չունէր եղելութիւնից։ Նա հաւաքելով հայերին ասաց. «պատրաստվեցէք, ձեզ կը տանեմ մինչև կայարան, այնտեղից ուր ուզում էք գնացէք»։ Շատ բարեպաշտ մարդ էր մեր պրիստաւը. մերկացնում է ժողովրդին, յետոյ ճանապարհում։ Կէսօրին հաւաքվեցինք բոլորս բարեպաշտ պրիստաւի շուրջը, վարձեցինք երկու ֆուրգօն և պրիստաւի ու պահակախմբի հետ ուղևորվեցինք դէպի կայարան։ Ճանապարհի կիսումը պրիստաւը յետ տուեց առարկելով թէ հեռուից թուրքեր են յարձակվում։ Սարսափահար ժողովուրդը յետ փախաւ դէպի գիւղը, որ թաքնվի, որպէս զի կարողանայ ազատվի գազանների ձեռքից։ Հայերը հասան գիւղ, ցրվեցին փողոցներում, սկսեցին թաքնվելու տեղ որոնել։ Դժբաղդաբար գերմանացիները արգելում են յուզված ժողովրդին թաքնվել իրանց բակերում։ Բայց մարդու անձը թանգ է. հայերը չեն մտիկ տալիս նրանց արգելքին։ Հայերի մեծ մասը հաւաքվեց մի բակ։ Թուրք ամբոխը վրա տուեց և կողոպտեց։ Մարդկանց և կանանց վրա գտնված թէ փող, թէ հագի շոր, թէ արծաթեղէն և թէ ոսկեղէն ու թանգագին իրեր վերցրին։ Այդ բոլորը կատարվեց պրիստաւի և զօրքի աչքի առաջ։ Ժամի 3-ին պրիստաւը հրամայեց գերմանացոց գիւղի տանուտէրի և ուրիշ անձանց, հաւաքել հայերին. տանուտէրը հաւաքեց թաքնված հայերին, որ ճանապարհեն նրանց կայարան։ Պէտք է նկատել, որ նոյեմբերի 18-ին Զարդախլու գիւղի մի վաճառական, որ եղել է Դալլարի կայարանում, լսելով այս բոլորը, ձի է հեծնում և գնում աղաչում է Ռուստամբէգի որդի Սկանդարբէգից ազատել հայերին կոտորածից։ Բէգը՝ Բաբաջանեանի աղերսանքին համաձայն, գնում է կայարան, տեսնում է, որ թուրքերը ուզում են յարձակում գործել, ցրիւ տալիս ամբոխը և երկաթուղի ճանապարհում 130 հոգի հայ, որոնց մէջ կային մարդ և կին, ծեր և մանուկ։ Հայերից մի քանիսը մնացել են կօլօնիայում իրանց ծանօթ գերմանացիների մօտ թաքնված՝ յոյս դնելով նրանց վրա։ Ամսի քսանին այդ թաքնվածներ հաւաքվում են ամենքը գիւղի դեղատունը ապահով համարելով, բայց պրիստաւը դրանց դեղատնից հանելով տանում է պօստը ստարշինի մօտ և խոստանում է, եթէ որ իրան 300 րուբլի տան, ապահով կը պահի. հայերը համաձայնվում են պրիստաւի խոստումին, փողը հաւաքում են տալիս։ Յետոյ Դալլարի աւազակների երկու խումբ 22-ին օր ցերեկով պրիստաւի աչքի առաջ յարձակվում են, քարուքանդ են անում նկուղները, գինու տակառները, թափում օղի և գինի։ Աղօթատունը կողոպտում են փչացնում ամեն սրբութիւն, սպանում են աղօթատան գանձապետին, նրա հօրը, ուրիշ չորս հայի. սպանում են և գերի են տանում երկու հոգու, երկու օր մի գիշեր պահում են և պահանջում են 800 րուբլի փրկանք։ Երկու մարդ ուղարկում են կօլօնիա փող ճարելու, մէկը Սարգիս Բաղդասարեանից, միւսը Մկրտիչ Յարութիւնեանից. գալիս են Կօլօնիա արտասունք աչքերին, փող են ճարում, բերում են տալիս 800 ր. գազանացած թուրքերին տալիս են պրիստաւին որ գերիներ արձակէ. շատ չարչարանքից տանջանքից յետոյ բաց են թողնում մերկ հայերին, որոնք ամսիս 25-ին հասնում են Թիֆլիս կիսամեռ։

Թուրքերի ձեռքին գերի են մնացել նաև մի աղջիկ և մի հարս, որոնց խլում են ծնողների ձեռքից։

Դալլար կայարանում եղած բոլոր խանութները և գարու և ցորենի շտեմարաններից կողոպտված են ամեն ապրանք։ 17 խանութ և 60 տուն կահ-կարասիքով ամենը թալանված է. վնասները հասնում են 250,000 րուբլու։ Կողոպտիչներն են Դալլար և Մօրօլի գիւղի թուրքերը իրանց մեծերի ղեկավարութեամբ։

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիսի քաղաքի պաշտպանութիւնը թուրքական հրոսակախմբից սօցիալ-դեմօկրատների ռազմիկ դրուժինան յանձն առած լինելով, հայոց Դաշնակցական կազմակերպութիւնը թոյլ էր տուել նրան գրաւել որոշ դիրքեր Թուրքաց Մէյդանի մօտ և այլ տեղերում և պատուիրել էր իր գործողներին չէզոք դիրք բռնել և չը միջամտել սօցիալ-դեմօկրատների գործողութիւններին։ Սկզբում սօցիալ-դեմօկրատները ամեն կերպ աշխատում են բարոյական ազդեցութեամբ համոզել թուրքերին վերջ դնել ընդհարման։ Թուրքերը առաջ հաւանութիւն են տալիս և յայտնում, որ կառաջարկեն հայերին իրանց հաշտութեան պայմանները։ Եւ իրօք, նրանք յանձնում են սօցիալ-դեմօկրատներին նախնական մի քանի հաշտութեան կէտեր՝ Դաշնակցութեան տալու համար։ Դաշնակցութիւնը ուշադրութեան առնելով այդ պայմանները, մշակում է իր կողմից էլ պայմաններ՝ թուրքերին առաջարկելու համար, սօցիալ-դեմօկրատների միջոցով։

Սակայն, թուրքերը, առանց սպասելու բանակցութեան հետևանքներին, կիրակի, նոյեմբերի 27-ին, ցերեկվայ ժամը 4-ին Մէյդանում մօտենում են մօտ 300 հոգի, զինւորված, սօցիալ-դեմօկրատների բռնած դիրքերին և պահանջում են թոյլ տալ իրանց անցնել հայերի թաղը։ Սօցիալ-դեմօկրատները, բնականաբար, մերժում են և յորդորում յետ կանգնել, հեռանալ։ Թուրքերից մինը ատրճանակով տեղն ու տեղը սպանում է մի սօցիալ-դեմօկրատի և այդ նշանի վրա, վայրկենապէս, զանազան տեղերից և անկիւններից, թուրքերը հրաձգութիւն են սկսում։ Սօցիալ-դեմօկրատները դիմադրում են նոյնպէս հրաձգութեամբ և օգնութեան կանչում հայ-դաշնակցականներին։ Տեսնելով, որ թուրքերը կամենում են գրոհ տալ, ինչպէս ասում են, սօցիալ-դեմօկրատները մի ռումբ էլ ձգում են թուրք խուժանի մէջ (այս լուրը հաղորդում ենք ամենայն վերապահութեամբ)։ Երկու կողմերի հրաձգութեան հետևանքն է լինում, որ սօցիալ-դեմօկրատներից սպանվում են 2 հոգի, իսկ թուրքերից մօտ 10 հոգի՝ սպանված և վիրաւորված։

Այդ հրաձգութեան պատճառով, քաղաքում կիրակի երեկոյեան սարսափ տարածվեց, բայց ժամը 10-ին ամեն բան հանդարտվեց։ Եւ հէնց այդ ժամանակ սօցիալ-դեմօկրատները յայտնեցին Փոխարքային, և Դաշնակցութեան բիւրօյին, թէ թուրքերը նախայարձակ եղան, փոխադարձ համաձայնութեամբ։ Դաշնակցութիւնը, գիշերը գրաւելով դիրքերը, պատրաստվեց, բարիկադներ կազմեց։ Երկուշաբթի առաւօտեան, նոյեմբերի 28-ին, զօրքն էլ եկաւ և յայտնեց, որ ուղարկված է յետ մղելու թուրքերի յարձակումները և պաշտպանելու դիրքերը, որ նրանք ներս չը խուժեն քաղաք։ Զօրքը բերեց իր հետ և թնդանօթներ։ Թուրքերը, թողնելով Մէյդանը, ամրացան իրանց տներում, քարվանսարաներում և մզկիթում և այդտեղերից, իբրև դիրքերից, սկսեցին հրաձգութիւն։ Զօրքը պատասխանեց։

Եւ այդպէս քաղաքի պաշտպանութեան գործում ակտիւ դեր սկսեցին կատարել սօցիալ-դեմօկրատներից բացի նաև զինւորները երէկ առաւօտվանից սկսած։

Երէկ, որքան յայտնի է, վիրաւորել են 2 սօցիալ-դեմօկրատ. թուրքերից սպանված և վիրաւորված՝ զինւորների հրաձգութիւնից, շատ պէտք է լինի, բայց թիւը յայտնի չէ։

Երէկ յայտնեցին, որ զօրքը առաջարկել է Բօրչալուից և շրջականներից եկող թուրքերին հեռանալ քաղաքից, այլապէս նա խիստ միջոցների կը դիմէ։ Ինչպէս ասում են, մօտ 500 ձիաւոր թուրքեր են մտել քաղաքը վերջին երեք օրվայ ընթացքում։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՇՈՒԼԱՎԵՐՈՒՄ

Նոյեմբերի 28-ին

Բօրչալուն բռնկվել է, դրութիւնը սոսկալի է. այրեցին Տուրինօվի, Արամեանի, Միրզօեվի և Մանթաշեանի կալուածքները և կողոպտեցին ամեն ինչ։ Շուլավէրը ներկայումս շրջապատված է երկու հազարից աւել ձիաւոր զինված թուրքերով, աղալարների առաջնորդութեամբ։

Մեր դրութիւնը ես անզօր եմ նկարագրելու։ Մեր ոյժը ձեզ շատ լաւ յայտնի է. մի շաբաթից աւել է, ոչ ես և ոչ տղերքը մի րոպէ անգամ չենք քնել։ Շուտով խնդրում եմ դիմեցէք Փոխարքային, որպէս զի գոնէ 300 հետևակ զօրք ուղարկէ։ Գաւառապետը երեք անգամ դիմել է նահանգապետին զօրքի համար, բայց ոչ մի պատասխան։ Ներկայումս այստեղ կայ 100 կօզակ, Լօռուց եկել են առ այժմ 40 հայ։ Հաղորդակցութիւն չը կայ, որ շուտ շուտ նամակ գրել լինի։ Ես թէև այդ չափազանց անհաւասար ոյժի հետ կռուի կը բռնվեմ մինչև վերջին ընկերոջս զոհվելը, բայց խնդրում եմ, երբ լսէք, որ մենք յաղթվել ենք, չը մեղադրէք մեզ գոնէ մեր մահից յետոյ։

Աղաչում եմ, եթէ Փոխարքան զօրք չը տայ, գոնէ 300 հրացան խնդրեցէք։ Աշխատեցէք փամփուշտ ու զէնք հասցնելու. կարիք կայ վառօդի և արճիճի։ Մեր դժբախտութիւնը նրա մէջ է, որ Շուլաւէրը դիրքեր չունի ու հազար մարդիկ էլ անզօր կը լինեն պաշտպանելու. որոշելու հնար չը կայ, թէ որտեղից թշնամին կը մտնի, որովհետև բաց է ամեն կողմից։

Վախտակ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԹՌՈՒՑԻԿԸ

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտէն նոյեմբերի 28-ին հրատարակեց հետևեալ թռուցիկը. «Երէկ, ցերեկվայ ժամը 4 1/2-ին, թուրքերը դաւաճանօրէն յարձակվեցին սօցիալ-դեմօկրատական զօրախմբի վրա, որ կռւում է խաղաղութեան գաղափարի համար։ Այս յարձակումը մի քանի զոհեր տարաւ։ Նոյն իսկ խաղաղութեան սպիտակ դրօշակը չըկանգնեցրեց սպանողներին։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը յայտնում է իր խորին ցաւակցութիւնը և համակրութիւնը քաջ մարտիկներին, որոնք ընկան խաղաղութեան գաղափարի համար։ Թող սրանք լինէին խելակորոյս ամբոխի վերջին զոհերը։ Փառք և պատիւ ազնիւ մարտնչողներին, որոնց յիշատակը անջնջելի կմնայ խաղաղասէր հայ ժողովրդի սրտի մէջ։

ՄԱՄՈՒԼ

Կուսակցական պայքարը յեղափոխական Ռուսաստանում օր օրի վրա որոշ և խիստ կերպարանք է ընդունում։ Ռուս հրապարակախօսութեան լաւագոյն ոյժերը խմբվում են զանազան քաղաքական դրօշակների տակ։ Դա, ի հարկէ, շատ բնական է մի ազատ երկրում. դա շատ հարկաւոր է հասարակական ճշմարտութիւններ պարզելու համար։ Միակողմանիութիւնը, աղանդաւորութիւնը պէտք է ընդհարվի կուսակցական հոսանքների հետ։ Այսպէս կարող են զատվել կուսակցական դաւանութիւններից բղխող ճշմարտութիւնները։ Սօցիալ-դեմօկրատիան իր բազմաթիւ օրգաններում, իր լայնարձակ, եռանդուն պրօպագանդայի մէջ շարունակ քարոզում է, որ ռուսաց յեղափոխութիւնը միմիայն պրօլետարիատի գործն է։ «Сынъ Отечество» արմատական թերթը, որ այժմ կուսակցական որոշ գոյն է ստացել, դառնալով սօցիալիստ-յեղափոխականների օրգան, այսպէս է պատասխանում սօցիալ-դեմօկրատներին։

Սօցիալ-դեմօկրատների պէս մենք չենք բարձրացնի պրօլետարիատը մի ինչ-որ անհասանելի պատուանդանի վրա, չենք սկսի հաւատացնել նրան թէ նա էր և կը լինի միակ մարտնչողը մարդկային անձնաւորութիւնը ազատելու համար, չենք սկսի խաբել մեզ և ուրիշներին թէ պրօլետարիատը ամբողջովին դատում, զգում և գործում է, ինչպէս մի մարդ։

Ո՛չ։ Միայն պրօլետարիատը չէ կռւում մարդկութեան ազատութեան և լուսաւոր ապագայի համար։ Մենք այս րոպէին չենք խօսի աշխատաւոր գիւղացիութեան մասին, որի շահերը և իդէալները համերաշխ են քաղաքային ազգաբնակութեան աշխատաւոր բազմութեան շահերի և իդէալների հետ։ Մենք կանգ կառնենք բանւորների և ինտելիգենցիայի փոխադարձ յարաբերութիւնների վրա։

Ընկեր բանւորները իրաւունք չունեն մոռանալու և երբէք չեն մոռանայ, ի հարկէ, նրանց, որոնք ամենքից առաջ դուրս եկան կռւելու և անձնուիրաբար զոհեցին իրանց՝ ժողովրդական գործին...։ Իր արիւնով բանւոր ժողովուրդը այժմ նուաճում է ազատութիւն։ Բայց մի՞թէ մենք իրաւունք ունենք մոռանալու այն նահատակներին, որոնց արիւն թափեցին աւելի վաղ, քան երբ բանւորները հասկացան կռուի անխուսափելիութիւնը։ Մի՞թէ կարող ենք մենք մոռանալ այն հերոսներին, որոնք գնում էին մահվան առաջ, երկար ժամանակ ոչ արձագանք, ոչ համակրանք գտնելով այն ժողովրդական մասսաների մէջ, որոնց համար մեռնում էին։ Եւ այժմ էլ միայն բանւորի արիւնը չէ թափվում։ Բանւորների հետ մեռնում են և ինտելիգենտները, և ոչ ոք չէ կարող հաստատել, թէ հազար ինտելիգենտների վրա աւելի քիչ զոհեր են ընկնում, քան հազար բանւորների վրա։

Մինչդեռ սօցիալ-դեմօկրատիան դասակարգային խիստ բաժանումների վրա է հիմնում իր վարդապետութիւնը, նոյն լրագիրը իր կազմակերպութեան անունից ասում է թէ պէտք է մի դրօշակի տակ հաւաքել սօցիալիստ ինտելիգենցիան և բանւոր մասսաները և կազմել նրանցից մի միաձոյլ, մեծ բանակ։

*

Սօցիալ-դեմօկրատիայի դէմ բանակռիւ է մղում և յայտնի Պետր Ստրուվէն, որ երեք տարի արտասահմանում հրատարակում էր «Освобожденіе“ յայտնի և շատ տարածված թերթը։ Սօցիալ-դեմօկրատական թերթերից մէկը մեղադրել էր պ. Ստրուվէին թէ նա «լիբերալիզմի անունով» սպառնում է բանւորներին սովամահ։ Ահա ինչ է գրում պ. Ստրուվէն «Наша Жизнь» լրագրի մէջ։

Սովամահ պատրաստում են բանւորների համար նրանք, որոնք կուսակցական քաղաքական հաշիւներով մղում են նրանց դէպի տնտեսապէս անմիտ, նրանց համար կորստաբեր գործողութիւններ, որոնք միաժամանակ քաղաքական արկածախնդրութիւններ են ի հաշիւ բանւորական դասակարգի և ամբողջ երկրի։ Թող չը խօսեն հոկտեմբերեան փառապանծ գործադուլի մասին, նրա պատմական մեծութիւնը և նշանակութիւնը հէնց այն է, որ նրան ոչ ոք չը բարձրացրեց, ոչ ոք չը շինեց, որ նա ծնվեց առաջ ընթացաւ իբրև անհրաժեշտ, հուժկու և ներդաշնակ ջանք բոլոր այն ժողովրդական ոյժերի կողմից, որոնք բուռն ձգտումն ունէին դէպի ազատութիւն։ «Այսօր փրկարար և փառաւոր—գրում էի ես—վաղը գործադուլը կարող է լինել կորստաբեր և յանցաւոր»։ Եւ եթէ սա ճիշտ է ընդհանուր քաղաքական գործադուլի վերաբերմամբ, աւելի ևս ճիշտ պիտի լինի այն առանձին գործադուլների վերաբերմամբ, որոնք սարքվում են առանց նկատի առնելու եղած բոլոր տնտեսական պայմանները։ Այսպիսի գործադուլները ինքնասպանութիւն են բանւորների համար, և նրանք, որոնք նոյն իսկ չեն փորձում իրանց ամբողջ ոյժով յետ կանգնեցնել բանւորներին այդպիսի ինքնասպանական գործողութիւններից, ծանր մեղք են վերցնում իրանց վրա։ Կոչ անելով դէպի «անկարգութիւններ», դուք անմիտ և կորստաբեր գործադուլներն էք առաջացնում։ Այդ կոչերը այժմեան ժամանակ կամ թեթևամիտ են կամ թէ յանցաւոր։ Նրանք պատրաստում են բանւորների համար սոսկալի դժբախտութիւններ, նրանք ռուսաց յեղափոխութեան համար պատրաստում են պարտութիւն։

Պէտք է ասել, որ այսպիսի բողոքներ գործադուլների դէմ սկսել են աւելի և աւելի յաճախ կրկնվել լիբերալ կազմակերպութիւնների և մամուլի մէջ։

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XLIV

Մեր դժբաղդութիւնը դեռ շարունակվում է։ Թուրք-հայկական արիւնահեղութիւնների ալիքները եկան հասան Թիֆլիս։ Հինգ օրից աւել է, Կովկասի մայրաքաղաքը ահ ու սարսափի մէջ է։ Հինգ օրից աւել է, որոտում են հրացանները ինքնապաշտպանութեան դիրքերից։

Բայց ճակատագիրը կարծես փոքր ինչ սկսել է փոխվել։ Մինչև այժմ թուրք-հայկական կոտորածները տեղի ունէին անտարբեր հանդիսատեսների աչքի առջև։ Կարծես ամենքը խօսք մի էին արել որ թոյլ տան երկու ազգերին իրար ջնջել, իրար ոչնչացնել։ Այս էջերում ես շատ անգամ եմ գանգատվել թէ ինչպէս մենակ, անօգնական ենք մնացել մենք, թէ ինչպէս ամենքը խուլ են անտարբեր։ Մեր արեան վտակների շուրջը ակադեմիական դատողութիւններ շատ էին լինում, խրատներ, բանաստեղծօրէն յօրինված յորդորներ, կոչեր շատ էին տրվում։ Բայց ոչ ոք չէր մտնում արիւնոտ ասպարէզը գործնական օգնութիւն հասցնելու համար։ Հրդեհը խօսքերով չէ հանգցնվում, գործ է հարկաւոր։ Բացակայում էր գործը։ Խօսում էին միայն։ Եւ խօսքը արդէն ձանձրացել էր ամենքին։ Ոչ ոք այլ ևս չէր հաւատում նրան։

Թուրք-հայկական ընդհարումը Թիֆլիսում հրապարակ հանեց վաղուց ցանկալի գործը։ Միջամտող չէզոք ոյժը։

Դա սօցեալ-դեմօկրատիան է։

Ինչպէս գիտէք, նա զինված դուրս է եկել արեան դաշտը։ Նա ուզում է խաղաղացնել, աշխատում է թոյլ չը տալ որ դժբախտութիւնը մեծ չափերի հասնէ։

Մենք տեսնում ենք նրա գործունէութիւնը։ Եռանդ, բարի ցանկութիւններ, քաջութիւն չեն պակասում կազմակերպված պրօլետարիատին։ Առաջին անգամն է որ նա ասպարէզ է գալիս իբրև զինված, ակտիվ ոյժ։ Նա, այսպէս ասած, հրային մկրտութիւն է ստանում, հասարակութեան առջև հասունութեան քննութիւն է տալիս։

Եւ մենք տեսնում ենք որ այդ նոր ոյժը գոնէ մինչև այսօր, փայլուն կերպով է կատարում իր ստանձնած դերը։ Զինված սօցիալ-դեմօկրատիան հերոսութիւն է ցոյց տալիս։ Ամենքը, սկսած գլխաւորներից, սկսած պ. Բամիրշվիլիից, անձնուիրաբար ծառայում են մեծ գործին, այն է մեր երկիրը ներքին, ազգամիջեան արիւնահեղութիւններից ազատելու գործին։ Երկու կողմից թափվող գնդակների տարափի տակ ամէնքը իրանց տեղն են կանգնած, չէզոքութեան դիրքերում, թոյլ չը տալով որ հակառակորդ կողմերը առաջ գնան, յարձակողական գործողութիւնների դիմեն։ Քանի՜ քանի կեանքեր են նրանք փրկել իրանց այդ դիրքով, քանի՜ դժբախտութիւններ են նախատեսել, վերացրել։

Երկու կողմերն էլ միայն երախտագիտութեամբ պիտի յիշեն սօցիալ-դեմօկրատիայի գործունէութիւնը։

Մեզ կը լինէր չափազանցնել իրողութիւնները։ Ես չեմ ասում թէ սօցիալ-դեմօկրատիան իր ներկայ ուժով, ներկայ կազմակերպութեամբ կարող է վերջ դնել արիւնահեղութիւններին մեր երկրի բոլոր կողմերում։ Ո՛չ։ Դա չափազանց լայնարձակ, ծաւալված մի հրդեհ է, որ կարելի լինի հանգցնել այդքան փոքրիկ, համեստ միջոցներով։

Բայց այնքանն էլ, ինչ անում է սօցիալ-դեմօկրատիան, արժանի է ամեն գովասանքի, շնորհակալութեան։ Հերոսութիւն յանուն համամարդկային գաղափարի, յանուն տանջվող մարդկութեան լաւագոյն ապագայի—կայ աւելի մի սուրբ, գեղեցիկ գործ։

Շատերը կարծիք են յայտնում թէ սօցիալ-դեմօկրատիան, կառավարութիւնից զէնք ստանալով վերադարձնելու պայմանով, կառավարութեան առաջարկութեամբ խաղաղարարի դեր ստանձնելով, մի տեսակ դաշնիքն է կապել կառավարութեան հետ, կարծես հաշտվել է նրա հետ։ Այս կարծիքի հետ մի րոպէ անգամ համաձայնվել չէ կարելի։ Մի գաղափարական կուսակցութեան առջև դրված է դիլեմա. կամ լինել կոտորածի, աւերածի լուռ ու անտարբեր վկայ, կամ իր ձեռքն առնել մի դեր, որ մինչև այսօր Կովկասում ոչ ոք չէ կարողացել կատարել, այն է բաց անել ժողովուրդների աչքը, գործով ցոյց տալ թէ ով է նրանց իսկական թշնամին, թէ ինչն է այդ ժողովուրդների փրկութեան իսկական ճանապարհը։ Սօցիալ-դեմօկրատիան ընդունեց երկրորդը։ Ոչինչ չը կորցնելով իր ծրագրից ու դաւանանքներից, նա իջաւ գործնական պրօպագանդայի լայն ասպարէզը աւելի մեծ հունձ հնձելու, մեծ ժողովրդականութիւն ստանալու համար։

Ողջունենք ամենքս ցաւերի, արտասունքների խեղդող ճգնաժամին մեզ հասած այդ օգնութիւնը։

Սօցիալ-դեմօկրատիան զէնք է առել ոչ թէ մեր կռուողների հետ միանալու համար ընդդէմ Թուրքերի։ Նա գալիս է հաշտութեան սպիտակ գոյնի նշաններով, գալիս է իր ամբողջ ույժն ու հեղինակութիւնը գործ դնելու, որ հայ ու Թուրք միմեանց չը կոտորեն, չը հրդեհեն։

Իսկ սա ամենամեծ օգնութիւնն է, որ կարող է ստանալ հայ ազգը։ Հայ կարիճները զինված կանգնած են իրանց դիրքերում։ Մի տխուր անհրաժեշտութիւն է դա, որ կատարում են նրանք։ Ինքնապաշտպանութիւն, աւել ոչինչ։ Եւ նրանք ամբողջ հայ ազգի հետ անհունապէս շնորհակալ կլինեն, եթէ ազատվեն այդ տխուր, հարկադրական անհրաժեշտութիւնից, եթէ հայ ժողովրդին նորից հնարաւորութիւն տրվի իր խաղաղ պարապմունքներին նուիրվելու,

Ո՞վ պիտի տայ այդ հնարաւորութիւնը։ Իւրաքանչիւր ջանք, որ անվում է այդ ուղղութեամբ, որքան էլ առ այժմ համեստ լինի նա, օգնութիւն է հային, որ կարող է միայն խոր, անկեղծ երախտագիտութեամբ ընդունվել։

Թող շատանան այդ ջանքերը, թող աւելի մեծ կարողութեամբ առաջ գայ խաղաղացնող ույժը։ Մենք ովսաննաներով կընդունենք նրանց։

Այս րոպէին մենք հիացած ենք սօցիալ-դեմօկրատիայի հերոսական, անդուլ գործունէութեան վրա, ծափահարում ենք նրան և ամբողջ սրտից կանչում ենք. «կեցցէ»։

Սօցիալ-դեմօկրատիական այս նոր գործունէութեան գաղափարական յստակութիւնը ընթերցողի առջև դնելու համար ես թարգմանում եմ նրա օրգան՝ «Кавказскій Рабочій Листокъ» լրագրից՝ առաջնորդը.

«Իշխանութիւնը բաց արաւ իր խաղաթղթերը։ Հրատարակված է փոխարքայի յայտարարութիւնը, որի մէջ նա ասում է թէ ոչ մի կամայական պաշտպանութիւն քաղաքում չպիտի լինի։ Ճանաչվում է միայն սօցիալ-դեմօկրատիական զօրախումբը։

Սա իրապէս նշանակում է, թէ փոխարքան ուզում է զինաթափ անել հայ հասարակութիւնը։ Իսկ զինաթափ անելով հայերին...

«Ո՛չ, սօցիալ-դեմօկրատիան այս ձեռնարկութեան մէջ մասնակցութիւն չի ունենայ։ Նա չի թոյլ տայ իրան հակադրել հայ ազգաբնակութեան, չի թոյլ տայ կառավարութեան բաժանում սերմանելու վրացիների և հայերի մէջ, ինչպէս նա սերմանել է հայերի և Թուրքերի մէջ։

«Եթէ կառավարութիւնը այնուամենայնիւ ը ուզէ զինաթափ անել ազգաբնակութիւնը, սօցիալ-դեմօկրատիան իսկոյն կանգնէ զինաթափ եղողների կողմը։ Չէ՞ որ մենք տեսել ենք թէ Ռոստովում, թէ Բագւում որ զինաթափ անողների ետևից գնում էին նրանք, որոնք սպանում էին, կողոպտում և այրում։

«Իր յայտարարութեամբ փոխարքան արդէն ազատեց սօցիալ դեմօկրատներին այն պատասխանատուութիւնից, որ նրանք վերցրել են իրանց վրա։ Եւ այդ պատասխանատուութիւնը նրանք նորից չեն ստանձնի, մինչև որ փոխարքան յետ չի վերցնի իր կարգադրութիւնը։

«Մենք պիտի յայտարարենք այստեղ, որ սօցիալ-դեմօկրատական զօրախմբերը ամբողջ ժամանակ ունէին յատուկ հրաման՝ չը խլելու զէնքերը ազգաբնակութիւնից և ոչինչ հիմք չը կայ որ սօցիալ-դեմօկրատիան ընդհարումներ ունենայ դրօշակակիրների հետ։ Ընդհակառակն, դիրքերում մեր ընկերները ամենագեղեցիկ յարաբերութիւններ են պահպանում թէ հայկական և թէ Թուրքական ինքնապաշտպանութեան հետ»։

Աւելի գեղեցիկ մի վաւերագիր, որ պատկերացնէր հասարակութեան առաջ հայ-Թուրքական ընդհարումների մէջ ակտիւ միջամտութիւն սկսած այս նոր ույժի բարոյական պատկերը նկարելու համար՝ հազիւ թէ հարկաւոր լինի։

Հաւատանք որ նոր օրեր պիտի տեսնենք։ Կռթնած մեր ինքնապաշտպանութեան հզօր ու անխախտելի զէնքի վրա, միշտ զգոյշ ու պատրաստ, առաջ գնանք սօցիալ-դեմօկրատիայի հետ եղբայրաբար մեր անկեղծ համակրանքներով պատելով նրա հերոսական անձնուրացութիւնը բոլոր ազգերի աշխատաւոր դասի դատին։

Հաւատանք որ այսպէս գնալով, մեր հորիզոնը, վերջապէս, կը մաքրվի արիւնից և աւերակների մուխից...

Եղբայրական ողջո՛յն և միւս կուսակցութիւններին, որոնք աշխատում են ամենքիս տենչացած խաղաղացման համար...

Լ.

ԳԱՆՁԱԿԻ ԱՂԷՏԸ

Նոյեմբերի 28-ին

Նորանոր ապացոյցներ կան, որոնք անհերքելի կերպով ապացուցանում են, որ Թուրքերը նախապատրաստված են եղել ուրբաթ, այդ չարագուշակ օրը, կոտորած անելու համար։ Հայերից շատերը եւս իմացել են, որ մէչդանում հինգշաբթի օրը կայացած ժողովը կոտորածի համար է կայացած եղել, բայց որովհետև այդպիսի լուրեր տարածողներին մեր խաղաղարար յանձնաժողովը պատժի ու յանդիմանութեան է ենթարկում, այդ մասին պահել են խորին լռութիւն։

Կոտորածից մի ժամ առաջ ոստիկանապետ Հասանբէկովը իր մօտ է կանչում գրավաճառ Ախունդովին ու յայտարարում, որ այսօր Թուրքերն ուզում են յարձակվել հայերի վրա։ Խօսակցութեան վկայ սանիտարական բժիշկ Մելիք-Ախիջանեանցը անմիջապէս վազում է յաջորդարան ու իմացում տալիս առաջնորդական փոխանորդ Կորիւնին։

Բազմաթիւ հայ գիւղացիներ մնացել են քաղաքումս, չեն կարողանում վերադառնալ գիւղերը։

Այսօր նորից փորձեցի զինուորով մի ընդարձակ հեռագիր ուղարկելու, բայց կրկին չեն ընդունել։ Հայ զինուորները երկիւղ են կրում այսպիսի յանձնարարութիւններ կատարելու։

Դիակները՝ զինուորների հսկողութեամբ կրում են հայոց եկեղեցու բակը։ Առ այժմս բազարում գտնվողներից պակասում էին 185 հոգի, որոնցից բերել են 24 դիակ. մնացած դիակները անհետ կորած են. մի քանիսներն այրվել են իրանց խանութներում։

Կան ընտանիքներ, որոնք մի քանի զոհեր են տուել։ Ժողովուրդը մնացել է վերին աստիճանի դժուար կացութեան մէջ։ Ո՞վ պէտք է այսքան դժբախտներին օգնէ. ո՞վ պէտք է սրանց կսկիծը փարատի ու սրանց արտասուքն սրբէ։ Մարդս մնում է շուարած։

Մարդիկ, նոյն իսկ անցեալի ամենալաւատեսները, որոնք իրանց անտեղի յորդորներով բազարը հայոց թաղը տեղափոխելու արգելքներ յարուցին, այսօր նրանք, իրանց ամբողջ հարստութիւնը կորցնելով՝ գլուխները ցած են ձգել ու մարդկանց երեսին չեն համարձակվում պարզ նայել... Այսքան արեան և դժբախտութեան պատասխանատուութիւնն ընկնում է նրանց վրա. խիղճը բնականաբար նրանց պէտք է տանջի։

Ոստիկանութիւնն ինքը կորում էր սայլերի առաջ ու թոյլ չէր տալիս (երկու ամիս առաջ) հայերին՝ խանութները տեղափոխելու։ Տողերիս գրողն այդ մասին հազարաւոր ապացոյցներ ունի։

Թուրք գիւղերից թալանի համար մեծ թըւով խուժան է եկել. եթէ հաւատանք պարսից հիւպատոսի տան ծառայողի խօսքերին, թալանի մասին նրանց մէջ կռիւներ են ծագել։ Բայց հաւանական է, որ նրանք ձեռնունայն են մնացել, քանի որ թալանի ամենամեծ, աւելի բաժինը ընկել է Թուրք բէգերի, խաղարար կօմիտէի անդամների և Թուրք ոստիկանութեան ձեռքը։ Այդ թալանի մասին յատկապէս կարգադրելիս է եղել սէյիդ Աբբասը. ռուսների մօտ շատ ապացոյցներ կան, բայց երկիւղ են կրում հրապարակով խօսելու։ Ոստիկանապետը, իրան ազատ զգալու համար, այդ թաղում գտնվող միակ պրիստաւ Օսիպօվին, որի մասին յամառ լուրեր էին պտտում թէ սպանված է, պահած է լինում իր տանը։ Ոստիկանութեան այդ պաշտօնեան երեկ զօրքով եկաւ հայոց թաղը մեռելի գոյն ստացած։ Հաստատվում է բազմաթիւ ապացոյցներով, որ ոստիկանապետ Հասանբէկովը հրամաններ արձակելիս է եղել, որ առանց շտապելու թալանեն, քանի որ գեներալից հրաման կար 3 օր զէնք չգործադրել։

Եւ, իրաւ, 3 օրից յետոյ ոստիկանութիւնը մի պաշտօնեայի ձեռքով հայոց թաղի պատերից կպցրել էր մի յայտարարութիւն, որով գեներալ—նահանգապետը հրամայում է բոլորին զինաթափ լինել, որովհետև հաստատված է պօլեվօճ սուդ, և այլն։ Յայտարարութիւնը գրըված է գրի մեքենայով, բայց առանց նահանգապետի ստորագրութեան։ Գեներալ Ֆլէշէրն ասեց, որ դա կեղծ է։

Այս երեկոյեան Թուրքերի կայարանիվրա յարձակումը ցոյց է տալիս, թէ Թուրք ոստիկանապետն ինչու համար այդ յայտարարութիւնը կպցրել է...

Թուրքերը, օգտվելով առաջին օրվայ աջողութիւնից, երեկ երեկոյեան ահագին ուժերով փորձեցին յարձակում գործելու հայոց թաղի վրայ, քաղաքի վերևի մասերից։

Ժամի 8-ին սկսվեց Թուրքերի կողմից կատաղի հրացանաձգութիւն. հայերը սկսեցին խիստ դիմադրութիւն ցոյց տալ։ Տեղական սպաները այդ գիշերվայ կռիւը նմանեցնում էին Պորտ Արտուրեան պատերազմին։ Մեր ուժից վեր է նկարագրելու կանանց, ժողովրդի, երեխաների մէջ տիրած սուգ ու շիւանը։ Կատաղի կռւի ժամանակ հայոց թաղում վառվեց Սուլուքեցիների խոտի դէզը. այդ քաղաքի ծայրի տունից, ուրեմն Թուրքերից գաղտագողի մտել են հայոց թաղը։ Իսկ ոչ այնքան հեռուից լսվում է «եա՛ Ալի» ձայնը, Թրքական յայտնի «Շախսէյ վախսէն»։ Դալի Ալին, ժողովրդի վրա սարսուռ ազդելու համար, իրարանցում գցելով բղաւում էր որ ինքն է եկողը։ Հայերից մի քաջարի խումբ, առանց միւսներին իմաց տալու, յարձակում գործելով՝ ներքևից մտնում է Բաղմանլար թաղը։ Սրանց աջողվում է կռւել ու մեծ ջարդ տալով Թուրքերին՝ հալածել դէպի Բաղմանլարի խորքերը։ Սակայն սրանց խանգարում է հայերի կրակը։ Անշուշտ, եթէ թիւրիմացութիւնը չը լինէր, Թուրքերը մեծ ջարդ կունենային։ Հայերին աջողվեց Թուրքերին հալածել դէպի բազմաշատ թաղը։ Թուրքերը այդ կռւում թողել են «Ալիի դրօշակը», որի վրան ամրացրած է «Ալիի ձեռքը»։ Անշուշտ երկար պէտք է շարունակվէր կռիւը եթէ հայերը զալպերով յետ չըքշէին Թուրքերին, թէև պէտք է ասել, որ հայերին օգնեց գեներալ Ֆլէշէրի հրամանով դէպի Թուրքերը երկու անգամ արձակվող թնդանօթները։

Հայերն այդ կռւում տուել են 2 սպանված, նոյնքան էլ վիրաւորված, և մէկ անհետ կորած։ Թուրքերի կորուստը, ինչպէս պատմում են, մեծ է։

Միւս օրը պաշտօնական անձինք գնացին կռւի վայրը ստուգելու թէ այդ երեկոյեան յարձակումը ո՛ր կողմից է տեղի ունեցել։ Այդտեղ Թուրքերը թողել էին երկու դիակ. Ալէքբէր-բէկ Ռաշիբէկովի շունը սպանված նաև բաւական փալասներ ու ամաններով նաւթ, որը մեր ամարդի Թուրքերի զէնքն է հրդեհելու համար։

Կռւի կատաղի այդ վայրկեանին ասպարէզ էին եկել այն՝ հայ կոչվող ջիմարները, որոնք փոխանակ օգնութիւն հասցնելու, դատապարտում են հայերին, որ չեն գնում Թուրքերի ոտը պաչելու ու ասելու. մե՛ր կայքերը ձեզ փէշքեշ, կեանքներիս մի դիպչէք։

Այսօր յաջորդարան եկաւ հայերի կողմից համակրութիւն վայելող գեներալ Ֆլէշէր, հայ ներկայացուցիչներին երեք հետևեալ առաջարկութիւնն անելու համար։

Նախ կայարանից հեռացնել զինված հայերին, որոնք գնդակահարում են կայարան գնացող եկող Թուրքերին։ Երկրորդ, մարդիկ ընտրել գնալու գեներալ Մալամայի հետ գիշերվայ կռւի վայրը ստուգելու, թէ ո՛ր կողմն է նախայարձակ եղել։ Երրորդ, պատգամաւորներ ընտրել, նոր ընդհատված հաշտութեան մասին բանակցութիւններ վերսկսելու։

Առաջին կէտի մասին հայերը կասկածներ յայտնեցին, փոքր ինչ տատանման մէջ ընկան, որովհետև հայերին եթէ հեռացնէին, Թուրքերը կարող էին նրանց փոխարինել և այնտեղի հայերի վիճակը կը դատապարտվէր վատթար կացութեան։

Մնացած երկու կէտերը փոքր ինչ հակաճառութեան հանդիպելուց յետոյ, սկզբունքով ընդունեցվին, հաշտութեան ընդհատած բանակցութիւնը շարունակել, ապա ներկայացուցիչ ընտրել թէ բանակցութիւն սկսելու, թէ երրորդ կէտին բաւարարութիւն տալու համար։

Հաշտութեան մասին կողմերի ներկայացուցիչները, ձևակերպութեան համաձայնութիւններ կայացնելուց յետոյ, գեներալ Մալաման յայտարարել է, որ եթէ կողմերն կը գլանան հաշտութիւն գլուխ բերելու, այն ժամանակ ինքն ստիպված կը լինի զէնքի ուժով երկու կողմերին հանդստացնելու, կամ զօրքը կառնէ ու Գանձակից կը հեռանայ։

Որոշված է, որ այս գիշեր երկու կողմերը հրացանաձգութիւն չունենան. այս տողերը գրելիս ժամի 11-ին, դեռ տիրում է խորին լռութիւն, տեսնենք դրութիւնը որքան ժամանակ է տևելու։

Վաղ առաւօտեան, ժամի 9-ին, կողմերը պէտք է գնան մինչև կամուրջը հաշտութիւն կայացնելու համար։

Այսպէս է դարիս օրէնքը, պէտք է ձեզ թալանեն, կողոպտեն, կոտորեն, և պահանջեն, որ ձեզ կոտորողին ձեռք մեկնէք ու համբուրվէք։

Դեռ շատ բաների պէտք է ականատես լինենք։ Կայարանից մեզ մօտ են եկել վրացի պատգամաւորներ, որոնք երկու կողմերին խնդրում են հաշտութիւն կայացնել, աւելացնելով, որ եթէ կոտորածի առաջը չառնվի, կարող է Բագւում կոտորած վերսկսվել։

Վաղը պէտք է հաշտվենք, առանց երաշխաւոր լինելու թէ նորից չէ սկսվելու կոտորածը. թող արար աշխարհը միանգամայն ընդմիշտ հասկանայ, որ քանի կոտորած կազմող պարագլուխները կը մնան անպատիժ, դեռ սև օրերի ականատես են լինելու Թուրք ու հայ տարրը։

Երէկվանից այրվում է Հաջիքէնդ ամարանոցը, բայց յայտնի չէ հայերի թէ Թուրքերի տները։

Նորշէն թաղի բնակիչները տեղափոխվել են հայոց թաղը։ Երէկ գիշեր Թուրքերը հրդեհեցին Նորշէն թաղը։ Նորշէնցիք պահպանութեան համար զօրք պահանջեցին—զօրք չը կայ պատասխանեցին նրանց։ Բաւական չէ զօրք չը լինելը, եղածն էլ անգործութեան է մատնված։

Սկսվել է հայոց թաղից օտարների գաղթը։ Հայերը նոյնպէս գաղթում են Թիֆլիս. խեղճերն այն կարծիքի են, թէ իրանց համար ուրիշ տեղ հանգստանալու վայր կը գտնվի։

Մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում Ֆօրերի անմարդասէր վարմունքից դէպի իր այգում բանող հայ մշակներին։ Նրանցից երկուսն ուզում են թաքնվել այգում, գինունկուղում, բայց նրանց արգելում է մարդասէր Ֆօրէրը։ Նրանցից երկուսը մտնում են ջրանցքը և երկու վերստաչափ ճանապարհ են գալիս գետնի տակի ջրանցքով և դուրս գալիս Գանձակի գետը։

Ժողովրդի դրութիւնը վերին աստիճանի լարված է։ Շտապում եմ նամակս մի հաւատարիմ մարդու ձեռքով ուղարկելու. նախորդ երկու անձանց ձեռքով ուղարկած երկու նամակներս անշուշտ ստացած կը լինէք։

—

Նոյեմբերի 24-ին

Չը կարողացայ նամակս ուղարկելու. նամակները պէտք է դրկել կայարան։ Այսօր կայացաւ հաշտութեան հանդէսը, Երկաթէ կամրջում։ Երկու կողմից հաւաքվել էին անչափ բազմութիւն։ Մենք շատերի հետ տեսնվեցանք, ամենքը կասկածում են հաշտութեան տևողականութեան մասին։ Հաշտութիւնը դեռ չէ տարածվել քաղաքի բոլոր ծայրերում. հայերը գնացել են իրենց մեռածների դիակները որոնելու, Թուրքերը անցան այս կողմը, մահմեդականների դիակները տանելու։ Վերևի այգիներում 4 անգամ այս րոպէիս հրացան արձակեցին։ Ժողովուրդը սրտատրոփ վազում է դէպի կօլօնիայի ճանապարհը, ասում են, որ մարդիկ կոտորեցին։ Ժողովուրդը հաշտութեան լուրն առնելուն պէս փոքր ինչ շունչ առաւ, մտածում էր իր կորցրածի մասին, իր գլխի ճարը ու իլլաջը տեսնելու. էլի այս ու այն կողմի մարդկանց ժողովում, կանանց երեխաների մէջ ահ ու սարսափ։

Մեր տնից հեռու գտնվող փայտ կոտրողին արգելեցին կացնով փայտ կոտրելու, որովհետև ամենաթեթև թրխկոցը մարդու վրա երկիւղ է ազդում։

Ոստիկանապետն իրեն արդարացնում է հոկտեմբերի 17-ին Մանիֆեստով։

Իբրև թէ իր խուլիգան հաւատակիցները, լսելով մանիֆեստի մասին, կարծել էին թէ ազատութիւն է տրվում ամեն անկարգութիւններ անել անպատիժ։ Սակայն այս խաբեբայի մասին աւելի լաւ է բոլորովին լռել... Երկար որոնելուց յետոյ, մնացեալ դիակները չեն գտել։ Այսօր իմացվեց, որ դիակները բազարից ժողովելով ձգել են Թուրքաց Սալլախանի մօտ. Թուրքերից մէկը դիակների տեղը յայտնելուց յետոյ աւելացրել է, որ շները քաշքշել են այս ու այն կողմը, դիակները նեխուել են ու հոտ է գալիս, եթէ չը տանէ՞ք, պէտք է նրանց կրակենք։

Յ. Գ. Ներկայացուցիչները գնացին կլուբը հաշտութեան պայմանները խմբագրելու։

Աւ. Սահակեանց

ՍՊԱՆՎԱԾՆԵՐ ԵՒ ՎԻՐԱՒՈՐՆԵՐ

Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցը 19 դիակներ բերվեցին նոյեմբերի 22-ի, 23-ի, 24-ի և 25-ի ընթացքում. 10-ը Թուրքեր են, 6-ը հայ, 1-ը անյայտ տղամարդ, 2 կին (մէկը ռուս լուացարարուհի, միւսը անյայտ)։ Բացի դրանցից, ծանր վիրաւորվածներից մեռան հիւանդանոցում 4 մարդ, 1 հայ, 1 Թուրք և 2 վրացի։ Ընդամենը ուրեմն մինչև նոյեմբերի 26-ը 23 դիակ կար։ Բժշկվելու համար հիւանդանոցում մնացած վիրաւորվածներ կային 35 մարդ և երթևեկ հիւանդներ 18 մարդ։ Ծանր վիրաւորվածներից հիւանդանոցում պառկած են Միքայէլեան 1) Ալի-Իսմայիլ-օղլի, 19 տ., գործակատար, 2) Մէշադի Աղա Սուլթանով, Թուրք, 50 տարեկան, 3) Ալի Զարվաբալա-օղլի, 10 տարեկան, 4) Մամէդ-Սալա-օղլի, Թուրք, 5) Իսմայիլ Շադօ-Վերդի-օղլի, 25 տարեկան, բանւոր, 6) Հասան Գէյշարին-օղլի, 40 տարեկան, 7) Ղուլը Բաբաեվ, 27 տարեկան, 8) Իսմայիլ Հուսէյն-օղլի, 30 տարեկան, բանւոր, 9) Մաշադի Հասան-Իսմայիլ-օղլի, 30 տարեկան, վաճառական, 10) Ֆեյզուլա-Ուլատ-Գիլդաեվ, 19 տարեկան, բանւոր, 11) Օսան-Վալի-օղլի, 12) Մուխտար Աբդուրեան օղլի, 13) Աղխա-Ախմէդ-օղլի, 14) Զէյնադ Սամէդօվ. 15) Խաբիստա Բաբա-օղլի, պարսիկ. 19 տարեկան, բանւոր, 16) Մամադ Ալի-օղլի, պարսիկ, 28 տարեկան, բանւոր, 17) Վահան Եգսեեանց, 15 տարեկան, աշակերտ (մեռաւ հիւանդանոցում) 18) Բագրատ Գէորգեան Խանեանց, 18 տարեկան, դերձակ, 19) Գրիգոր Յարութիւնեան, 21 տարեկան, կաշեգործ, 20) Աբրահամ Սարգսեան, 76 տարեկան, առևտրական, 21) Աւետիս Դարախչյեանց, 22) Կարապետ Կադրելեանց, 23) Յակոբ Շախրօվ՝ 24) Արշակ Խաչատրեանց. 25) Պօղոս Վարդանեանց, 26) Գէորգ Ոսկանեանց. 27) Ալէքսանդր Նազարօվիչ Մաղխաշվիլի (մեռաւ հիւանդանոցում), 28) Վիկտոր Ռոստոմովիչ Արջուաձէ, 29) Ալէքսէյ Գոգիշվիլի, 30) Գէօրգի Մգալոբլիշվիլի (մեռաւ հիւանդանոցում) 31) Նիկոլայ Գիվինաշվիլի, 32) Արխիպ Բէրիձէ. 33) Գուստավ Կարլովիչ Մուգաշվայն։ Երթևեկ հիւանդներ. 1) Աբդուլա Մարդան-օղլի, 2) Մամէդ-ալի-Ջաֆար-օղլի. 3) Սուլէյման (չէչէն). 4) Հուսէյն-Աբդուլ-Ախամ-օղլի. 5) Հասան-Հուսէյն Իսմայիլ-օղլի. 6) Մամէդ-Ալի-օղլի. 7) Ալէքսէյ Մարգոժեձէ. 8) Արկադի Նաիբօվ. 9) Էլիզբար Մագէվ. 10) Անուշաւան Նահչաբեանց. 11) Ալէքսանդր Գրիգորեանց, 12) Սիրօ Աւդանօվ. 13) Մալաքէկ Սարգսեան. 14) Սահակ Աբրահամեան 15) Սահակ Փանոսեան. 16) Վելիամին Սէրգէեան. 17) Տիմօֆէյ Իգզօմօվ. 18) Դաւիթ Բէրիձէ։ Առայժմ ճանաչված են 2 դիակ. 1) Սանդրօ Սաիֆօվ, 2) Միխայիլ Օժոնաշվիլի։

ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏԻԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՐԵԶՕԼԻՒՑԻԱՆ

Մի ազգութիւնը միւս ազգութեան դէմ գրգռելու քաղաքականութիւնը վերջին տարիներս դարձել է կառավարութեան ձեռքում ամենագլխաւոր գործիք, կռւելու պրօլետարիատի յեղափոխական շարժման հետ և Կովկասեան վերջին դէպքերի մէջ հասաւ իր գագաթնակէտին, ստանալով արիւնահեղ կոտորածի կերպարանք հայերի և Թուրքերի մէջ։ Արտայայտելով իր զայրոյթը միապետութեան բարբարոսական գործողութիւնների դէմ, ժողովը արտայայտում է համոզում, որ միայն բոլոր ազգութիւնների պրօլետարների համերաշխ կռիւը՝ սօցիալ-դեմօկրատիայի ընդհանուր դրօշակի տակ կարող է պատշաճաւոր դիմադրութիւն ցոյց տալ ցարիզմի ազգայնական քաղաքականութեանը։ Ժողովը յայտնում է Բագւի հայ և Թուրք ընկերներին և ամբողջ Կովկասի պրօլետարիատին իր խորին համակրութիւնը, համոզված, որ նրանք այսուհետև, չը նայած ոչ մի արգելքի, կը շարունակեն յեղափոխական կռիւը ամբողջ Ռուսաստանի պրօլետարիատի հետ միասին, և նրա հետ միասին էլ կը հասցնեն կռիւը մինչև ցարիզմի վերջնականապէս յաղթահարելը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գեներալ Մալաման ամսիս 26-ին երեկոյեան վերադարձաւ Գանձակից Թիֆլիս։

—

Կիրակի օր, նոյեմբերի 28-ին, կէսօրից յետոյ, Փոխարքայի պալատի մօտ, Երմօլօվսկայա փողոցում կօզակների արձակած գնդակներով սպանվեց մի մարդ և վիրաւորվեց մի երիտասարդ, որի թևի վրա կապած էր սօցիալ-դեմօկրատական սպիտակ նշան։ Հրացանի ձայներից Գօլօվինսկի պրօսպեկտում սկսեց պանիկա. մարդիկ սկսեցին դէս ու դէն փախչել, բայց հանգստութիւնը շուտով վերականգնվեց։

—

Գանձակից յաջորդ Կորիւն վարդապետը խնդրում է հեռագրով ուղարկել մի բժիշկ-վիրակապ, որին մեծ կարիք կայ այնտեղ։ Թող հայ բժիշկ-վիրակապները շտապեն օգնութեան հասնել։

—

Վրացի ազնուականութեան նախաձեռնութեամբ մի քանի անձեր դիտաւորութիւն ունեն Թիֆլիսից ուղևորվել կառքերով դէպի Շուլաւէր և համոզել Թուրք ազգաբնակութեանը զէնքը թողնելու և հաշտ ապրելու հայերի ու միւս ազգերի հետ։

—

Թիֆլիսի խանութները երեկ մեծ մասամբ փակ էին։ Քաղաքում երթևեկութիւնը կատարվում էր ազատ կերպով, բացի վեցերորդ քաղաքամասից, որտեղ ապրում են Թուրքերը և գտնվում են ընդհարվող կողմերի դիրքերը։

—

Թիֆլիսում լուրեր են տարածվել Բագւում տեղի ունեցած յուզմունքի մասին։ Այդ տեղեկութիւնները ստուգված չեն, ուստի պէտք է վերաբերվել նրանց զգուշութեամբ և վերապահութեամբ։

—

Թիֆլիսում ռուս ազգաբնակութեան մի որոշ մաս, ժողովվելով միխօներական եկեղեցում, նոյեմբերի 26 և 27-ին խորհրդակցութիւն կազմելով եկել են այն եզրակացութեան, որ պէտք է իրանք էլ ինքնապաշտպանութեան համար զէնք ունենան։ Առանձին պատգամաւորութիւն նրանց կողմից ներկայացել է Փոխարքային և յայտնել խորհրդակցութեան որոշումը։ Փոխարքան անկարելի է համարել բաւարարութիւն տալ այդ խնդրին։

—

Գանձակից հաղորդում են «К. Раб. Листокъ» թերթին, որ հայերի և Թուրքերի մէջ զինադադար կնքվելուց յետոյ, հաւաքվեցին բոլոր ազգութիւնների կազմակերպված բանւորները՝ պարզելու համար Թուրքերին դէպքի իսկական պատճառները։ Այդ ժամանակ Թուրքերի կողմից հարուածներ թնդացին և շատ ընկերներ (բանւորներ) տեղնուտեղը ընկան։ Հաղորդում են և այն մասին, որ այժմ վտանգ է սպառնում ոչ միայն հայերին, այլ և վրացիներին և ռուսներին։

—

Պարտք ենք համարում «Возрожденіе» թերթի ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրա, որ Թիֆլիսի Թուրք-հայկական ընդհարումներին վերաբերեալ իրողութիւնները միակողմանի կերպով չը լուսաբանվեն, ինչպէս վերջին համարում։ Թերթը գովասանքով է խօսում, օրինակ, այն մասին, որ Թուրքերը ազատել են մի քանի հայերի, բայց մոռանում է յիշել, որ հայերը մօտ 200 պարսկա-հպատակ Թուրքեր ազատելով, հասցրել են անվտանգ պարսից հիւպատոսարանը։ Կամ նա յիշում է թէ ինչպէս Կարմիր Խաչը օգնել է վիրաւորված Թուրքերին, մինչ պէտք էր յիշել, որ հայերից ևս վիրաւորվածներ են եղել։ Միւս կողմից մենք չենք կարող մեր ցաւը չը յայտնել, որ «Արշալոյս» հայ թերթը իր վերջին համարում թոյլ է տուել մի անարժան վարմունք սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան հանդէպ։ Ներկայ տագնապալից օրերում մամուլը պարտք ունի կշռել իր արտասանած ամեն մի խօսքը։

—

Կիրակի երեկոն հարուստ եղաւ արիւնահեղ դէպքերով։ Ժամի ութի մօտերը, մի ականատես կինը պատմում է, որ Գօլօվինսկի պրոսպեկտի վրա իրարանցում ընկաւ, որովհետև լսվել էին հրազէնի պայթիւններ։ Յիշեալ ականատես կինը, ուրիշների նման փախչելով ընկնում է Օրբանտ հիւրանոց։ Այդ հիւրանոցում եղած մի քանի օֆիցերներ դուրս են գալիս և գնում դէպի ողբերգութեան վայրը։ Ականատես կինը միանում է նրանց և երբ գնում են, ռուսաց սօբօրի մօտ, Երմօլօվեան փողոցում գտնում են մի մարդ գետնի վրա պառկած հոգևարքի մէջ գալարվելիս, իսկ մի ուրիշը, մի ջահել տղամարդ քունքից վիրաւորված, արիւնլուայ։ Սպաները դէպքի վայրում գտնում են կօզակներ, որոնց դիմում են եղելութեան մասին տեղեկանալու։ Կօզակները պատասխանում են, որ այդ զոհերն են իբրև թէ իրանց վրա զէնք պարպել։ Օֆիցերները. «սպանեցէք նրանց» բղաւում են, բայց մէջ է ընկնում կինը յայտնելով, որ նրանք անմեղ են. իսկ ջահել երիտասարդը, որը թևին կապած է եղել սպիտակ նշան, ձեռքերը առաջ կարկառած խնդրել է, որ իրան չը դիպչեն, որովհետև ինքը և ընկերը յանցանք չունեն. իրանց վրա կրակել են կօզակները։ Սպաները դիմում են կօզակներին, որ այդ ինչ են արել. կօզակները երդվել են որ իրանք չեն դէպքի հերոսները։ Սպաները, ասում են, ստուգելու համար, գնացել են, քըննելու նրանց հրացանները թէ արդեօք փամփուշտները ամբողջ են։ Իսկ ականատես կինը՝ սպաների կողմից նրա տրամադրութեան տակ դրված մի կառքով և մի կօզակ պահապանով գնացել է տուն։ Բայց ճանապարհին կօզակը մերժել է ընկերանալ կնոջ, որովհետև վախեցել է, որ իրան կը հասնի, որտեղից որ է, մի վրիժառու գնդակ։

—

Թիֆլիսի տպարաններում աշխատանքները դեռ չեն վերսկսված և գրաշարներից պարապվել են սկսել միայն լրագիրների վրա աշխատողները։ Ընդհանուր համաձայնութեամբ գրաշարները որոշել են լոյս ընծայել միայն կէս թերթ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԷՊՔԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Երէկ մենք հաղորդեցինք, որ Կ. Պօլսում քրիստոնեաների նոր կոտորածի լուրը շատ հաւանական կարող է լինել։ Երեկոյեան ստացված մայրաքաղաքի ռուս թերթերը հաստատում են մեր ենթադրութիւնը և այժմ մենք գրեթէ հաւաստի ենք գտնում այն լուրը, թէ Կ. Պօլսում կոտորած է սկսվել և եւրոպական էսկադրան ամբարկծում է սուլթանի մայրաքաղաքը։

Վիէննայից մի թղթակից հետևեալ տեղեկութիւններն է հաղորդում.

«Օրվայ քաղաքական շարիքը այստեղ մեծ պետութիւնների միացեալ էսկադրների ցոյցն է Թիւրքական ջրերում։ Զանազան կողմերից վերագրում են Աւստրիային ազրեսիվ ծրագիրներ։ Իտալական մամուլը հաւատացնում է, որ իբրև պատասխան սուլթանի այն սպառնալիքին, թէ Թիւրքիայում կոտորած կը լինի, իբրև հետևանք ծովային ցոյցի, և այդ պատճառով նա հեռացնում է իրանից որ և է պատասխանատուութիւն, աւստրիական զօրքերը կը մտնեն Մակեդօնիա։ Հետաքրքրական է, որ Կ. Պօլսում թագաւորում է մի չարագուշակ անդորրութիւն, որպէս թէ մարդիկ, նախազգալով մրրիկը, թաքնվում են տներում։

«Թիւրքական կեանքի վրա այժմ սաստիկ ազդեցութիւն էին գործում Ռուսաստանում կատարվող դէպքերը։ Ամեն բան այնպէս է դասաւորվել, որ կարելի է մտածել, թէ մէկը դաւադրութիւն է սարքել Թիւրքիայի դէմ։ Առաջ ռուս-ճապօնական պատերազմը, որ սոսկալի թանգութիւն առաջ բերեց Կ. Պօլսում՝ յետոյ ապստամբութիւնը «Պոտեմկին» նաւի վրա, որ մեծ սարսափ առաջ բերեց մայրաքաղաքի ժողովրդի մէջ. ապա կոտորածները Բագւում և Թիֆլիսում, ջարդերը հարաւային Ռուսաստանում, սպանութեան փորձը սուլթանի դէմ, դինամիտային ռումբեր գտնելը Կ. Պօլսում, Զմիւռնիայում, Դամասկոսում և ուրիշ քաղաքներում, ապստամբութիւնը Եմէնում—այդ ամենը ստեղծեց անօրինակ դադար առևտրի մէջ, իսկ այժմ էլ միացեալ էսկադրների այս ծովային ցոյցը։ Ի հարկէ, սուլթանը վերջ ի վերջոյ կը զիջէ մեծ պետութիւնների պահանջներին, բայց մինչ այդ շատ ժամանակ կանցնէ. ինչ՞ կարող է երաշխաւորել Թուրքաց ֆանատիկոս ամբոխի մասին, մանաւանդ որ նրան դրդում է հոգևորականութիւնը։ Արդեօք գործը կը հասնի՞ քրիստոնեաների կոտորածին։ Եւ այո, և ոչ—ամեն բան կախված է մուսուլման հոգևորականութիւնից և ոչ սուլթանից։

«Եթէ փոթորիկը պայթեց, քրիստոնեաները անպաշտպան կը լինեն, որովհետև Բօսֆորում գտնվող պահականաւերը չեն կարող ոչ մի էական օգնութիւն հասցնել։ Եւրոպական թաղը ամեն կողմից շրջապատված է Թիւրքական արուարձաններով, իսկ մուսուլմանները երբէք իրանց այնքան վիրաւորված չեն զգում, ինչպէս այժմ։ Թիւրքերը համոզված են, որ մեծ պետութիւնները իրաւունք չունեն պահանջել կօնտրօլ մակեդօնական ֆինանսների վրա, իսկ հոգևորականութիւնը ներշնչում է նրանց, թէ ծովային ցոյցը բացառապէս նպատակ ունի անդամահատել Թիւրքիան, բաժանել և ստրկացնել նրան։ Սոսկալի, մեծ պատասխանատուութիւն է առնում իր վրա եւրոպական դիպլօմատիան»։

Բօլգարական լրագիրները լի են յուզիչ տեղեկութիւններով Թիւրքիայից, այնտեղ պատրաստվող քրիստոնեաների կոտորածի մասին այն դէպքում, եթէ եւրոպական միացեալ նաւատորմը որ և է ակտիվ գործողութիւններ սկսէ Միջերկրական ծովի կամ Արշիպելագոսի Թիւրքական նաւահանգիստների դէմ։ Լաւատեղեակ «Վէչ. Պոստ.» լրագրին հաղորդում են Կ. Պօլսից, թէ «անգլիական դեսպանատունը ստացել է դրական տեղեկութիւններ այն մասին, որ պալատական հզօր կուսակցութիւնը, որի գլուխ կանգնած է շէյխուլիսլամը պնդում է, սուլթանի առաջ, որ Կ. Պօլսում և Մակեդօնիայում քրիստոնեաների ընդհանուր կոտորած կատարվի։ Այդ կուսակցութիւնը յոյս ունի, որ Եւրոպան կը սարսափէ մուսուլման սոսկալի ֆանատիկոսութիւնից և այլ ևս չի համարձակի դիմել ստիպողական միջոցների,—մանաւանդ որ այսպիսի սոսկալի դէպքերից յետոյ հերթական կը դառնայ Թիւրքիայի ամբողջութեան հարցը, որը, սակայն չէ կարող լուծվել եւրոպական պետութիւնների տարաձայնութեան աւիթով։ Դիպլօմատիական շրջաններում երկիւղ են կրում, որ չը լինի այդ կուսակցութիւնը կարողանայ համոզել դեռ տատանվող սուլթանին։ Անգլիական դեսպանատան նախաձեռնութեամբ, Ելդըզ-Քեօշկին կտրուկ պահանջ կը դրվի սօֆտաների դէմ միջոցներ առնելու մասին, որոնք, արդէն յայտնի համարձակ քարոզում են սրբազան պատերազմ քրիստոնեաների դէմ։ Դրութիւնը սաստիկ կրիտիկական է»։

Իսկ բօլգարական հեռագրական գործակալութիւնը հաղորդում է Կ. Պօլսից հետևեալը։

«Պատրաստվող ծովային ցոյցի լուրը, ըստ երեւոյթին, այնքան սաստիկ գրգռել է թէ Պօլսում և թէ գաւառներում ֆանատիկոս մուսուլման ժողովուրդը, որ նա որոշել է կազմակերպել քրիստոնեաների ընդհանուր կոտորած։ Սօֆտաները եռանդուն կերպով քարոզում են այդ ուղղութեամբ և այստեղի շրջաններում չեն կասկածում, որ սուլթանին մօտիկ մի քանի անձինք աշխատում են համոզել նրան տալ գաղտնի հրաման քրիստոնեաների ընդհանուր կոտորածի մասին։ Այդ անձինք յոյս ունեն ստանալ սուլթանից այդպիսի հրաման—մանաւանդ որ, մի անգամ, հայկական կոտորածի ժամանակ Կ. Պօլսում 1897 թ. այդ տխուր հրամանը տրվեց։ Նորագոյն դէպքերի պատճառով, այդ յամառ լուրերը շատ լուրջ նշանակութիւն ունեն և քրիստոնեայ ազգաբնակութիւնը, թէ մայրաքաղաքում, թէ գաւառներում սաստիկ անհանգիստ վիճակի մէջ է գտնվում»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքական ակնկալութիւններ. «Бирж. Вѣд.» լրագրի թղթակիցը գրում է Բեռլինից. «Սուլթան Աբդուլ-Համիդի յամառութիւնը, այն վճռականութիւնը, որով նա մերժում է պետութիւնների պահանջը Մակեդօնիայում ֆինանսական հսկողութիւն հաստատելու մասին այստեղի դիպլօմատիական շրջանակներում բացատրում են բացառապէս Ռուսաստանի թուլացմամբ և ռուսաց յեղափոխական շարժմամբ։ Սուլթանը և նրա խորհրդատուները իրանց կուրութեան մէջ հասել են այն համոզման, որ եթէ պետութիւնները կատարեն իրանց սպառնալիքը և զինուորական ույժի դիմեն, այն ժամանակ, անկախ դէպքերի ընթացքից, Ռուսաստանը կը կորցնէ Կովկասը։ Այս կարծիքը աւելի ևս ամրացաւ Կ. Պօլսում, երբ այնտեղ տեղեկութիւն ստացվեց Սեվաստօպոլի զինուորական ապստամբութեան մասին։ Թուրքաց մայրաքաղաքից ստացված է տեղեկութիւն, որ այնտեղի լրագիրներին ամենախիստ կերպով արգելված է որ և է մի բան հաղորդել Սեվաստօպոլում տեղի ունեցած դէպքերի մասին»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագւում անցեալ հոկտեմբերի 20-ին խառնակութիւնների ժամանակ կորել է Բանանց գիւղի բնակիչ

ՍԱՐԳԻՍ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՏՕՆԵԱՆՑԸ

Նրա հայր Միքայէլը գնացել է Բագու որդուն փնտռելու, բայց չէ գտել. գուցէ փախել է Բագւից, կենդանի է մնացել,—յայտնի չէ։ Նրա դժբախտ հայրը աղերսում է՝ ով գիտէ նրա որդու տեղը, ուր գտնվելը, որտեղ սպանվելը (եթէ սպանված է) կամ ում ձեռքով թաղվելը, թող բարեհաճի յայտնել իրան, որդեկորոյս հօրը։ Յայտնել կարելի է «Մշակի» միջոցով կամ նրա թղթակից Ստ. Տէր-Աւետիքեանի (Գանձակ)։ 1—5

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.

ектропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.